


ՏՆՕՐԷՆ-ՈՄԲԱԳԻՐ
ՅԱՐՈՒԹԻՒՆ ԱՆՓԻԱՐ

Նամակ կամ որ եւ է գրութիւն
պէտք է ուղղել առ

ԽՐԱԳՐՈՒԹԻՒՆ ՓԱՐՈՍ ԼՐԱԳՐԻ
Պապար Մուրուր, ԳԱՅԻՐԷ

Direction du journal PAROS
Bazar Mourour, CAIRE Egypte



Լ Ր Ա Փ Ի Ր

ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԿԻ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ԶՈՐԵՔՇԱՐԹԻ ԵՒ ՇԱՐԱԹ ՕՐԵՐԸ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Եգիպտոսի համար տեղիւն. ողջ դն. 80
» » վեցամսեայ » 50
Օգտու երկիրներ տարեկան Գրան 25
» » վեցամսեայ » 14
Թղթատարի ծախքը խմբագրու-
թեան վրայ է:

Խմբագրութեան ուղղութեամբ նա-
մակ կամ այլ գրութիւն եւ չի տրուիր:

ԶԻՐԱՐ ՀԱՍԿՆԱՆՔ

Դեռ կը շարունակուին, եգիպտացիներ
ազգայնոց մէկ մասին մէջ, թիւր մեկնութիւն-
ներ, սխալ ըմբռնումներ այն կանոնադիրնե-
րու մասին որոնք վերջերս քուէարկուեցան
երեսփոխանական ժողովին կողմէ, և նորա-
կազմ հոգաբարձութիւններուն յանձնուեցան
ի գործադրութիւն: Լաւ չըլլար սակայն որ
ժողովուրդը և առաջնորդարան զերար հասկը-
նան: Մենք սիրով կը ստանձնենք երկու կող-
մերը փոխադարձաբար լուսարանելու պաշ-
տօնը, որչափ որ կը ներեն Փարոսին նեղ է-
ջերը ու նիւթերու այլազանութեան պէտքը.
ժողովուրդէն բխած արդար գիտողութիւն-
ները կը հիւրընկալենք, ինչպէս նաեւ կը հա-
տարակենք ազգ. պաշտօնական մարմիններու
բացատրութիւնները կամ պատասխանը: Այ-
սօր ընդհանուր ակնարկ մը նետենք խնդրին
վրայ:

Ի՞նչ էր այդ կանոնադիրներու խմբա-
գրութեան ծնունդ տուող գաղափարը. բա-
րեյիշատակ ազգայիններու կողմէ կտակուած
գումարներն ամբողջովին և ուղղակի իրենց
նպատակին ծառայեցնել, փոխանակ բաժնե-
լու Առաջնորդարանի իրաւասութեան տակ
գտնուող այս կամ այն պէտքերուն. ինչ որ
գաղութիւնն է՝ գաղութին, և ինչ որ աղքատնե-
րուն է՝ աղքատներուն. հապա եկեղեցի՞ն,
հապա գերեզմանատունը. լաւ ուրեմն, զա-
նոնք ալ անխնամ չի ձգելու համար, հասոյ-
թի աղբիւրներ սանդղակ պէտք էր և ստեղ-
ծուեցան: Ամեն բան մեռեալներէն սպասե-
լու տեղ, — անոնցմէ որ կտակ ըրած են, —
լաւագոյն սեպուեցաւ քիչ մըն ալ ապրողնե-
րուն դիմել, անոնց որ չեն ուզեր իրենց բա-
րեպաշտութիւնը կասկածի տակ ձգել. խօս-
քով ամեն մարդ ազգասէր է, ամեն մարդ
եկեղեցասէր է, և — պզտիկ չեղում մը ընե-
լու համար — ամեն մարդ ընթերցասէր է:
Գործնականին մէջ գերերը կը ճշդուին:

Եթէ կ'ուզենք որ եկեղեցիինս «չէն ու
պայծառ» մնայ, եթէ կ'ուզենք որ գերեզ-
մանատունինս կանոնաւորութիւն ու վարդապետի,
եթէ կ'ուզենք որ աղքատները երեսի վրայ չի
թողուին, ամեն մարդ՝ իր կարողութեան չա-
փով՝ բան մը տալու է: Այդ չափը ու տա-
լու պայմաններն են ահա՝ որոնք սահմանուած
են նոր կանոնադիրներով:

Ամենէն աւելի քննադատութեան առար-
կայ եղող տրամադրութիւններն էին՝ եկեղե-
ցիին մէջ վճարողներու յատուկ աթոռներու
գերեզմանը որոնց վրայ նստելու իրաւունք չի
պիտի ունենային աղքատները. յետոյ, Մար-
մինացի գերեզմանատան մէջ նկուղի մը չի-
նութիւնը՝ ձրի թաղողներու համար: Ասոնք
հակառակ էին Հայաստանեայց եկեղեցւոյ
հնաւանդ օրէնքներուն ինչպէս նաեւ մեր ժա-
մանակակից բարքերուն իսկ որոնք, որքան ալ
քաղաքակրթուած ըլլան, բարեբաղդաբար
միշտ հետք մը կը պահեն մեր հին բարի սո-
վորութիւններէն ու բարեպաշտութիւններէն:
Եկեղեցւոյ ու գերեզմանատան հոգաբարձու-
թիւնները շուտով անդադրաբան, իրաւունք
տուին հանրութեան դանդառներուն և ինք-
նաբերաբար ջնջեցին այդ տրամադրութիւն-
ները: Կը մնան դեռ քանի մը կէտեր ալ
բարեփոխութեան կայտա, որոնք քննուելու
վրայ են ձեռնհաս մարմիններուն կողմէ, եկե-
ղեցական հայրերուն ալ կարծիքն հարցուե-
լով. յետոյ, կանոնադիրներն՝ իրենց բարե-
փոխեալ ձեւին մէջ՝ պիտի ներկայացուն և
բեմափոխանական ժողովին, ուսումնասիրուին,
վիճարանութեան դրուին ու վաւերացուին
վերջնապէս: Հոգաբարձութեան անգամ չե-
ղող մը որ երեսփոխան է, կրնայ այդ ժողո-
վին մէջ արձագանդ տալ ժողովրդեան գի-
տողութիւններուն, եթէ մնացած ըլլան տա-
կաւին, և այս կերպով լաւ ու կատարեալ
գործ մը գլուխ կ'ենլէ:

Աղքատին տղան իր ձրի մկրտութիւնը
պիտի ունենայ, աղքատին մեռեալը իր ձրի
թաղումը պիտի ունենայ. մինակ, հոգ պիտի
տարուի որ, քիչ չառ ունեւորներն ալ օգտուիլ
չի փորձեն այս գիւրդութիւններէն ինչ որ հազ-
ուադէպ չէ: Առաջնորդարանը գիտէ, կըր-
նայ ճշդել ամենուն կարողութիւնը և խստա-
պահանջ պիտի ըլլայ կարողներու մասին: Ասի-
կայ մեղք է:

Մեր Ս. Մինասէն քանի մը քայլ անդին
տեսէք ուրիշ քրիստոնեայ հասարակութիւնե-
րու գերեզմանատունները: Մեռեալներու նը-
կատմամբ ունեցած երկիւղած յարգանքին
ի յայտ կուգայ այն խնամատ հոգածութեան
մէջ որով մարդը, զարգարուն ու վայելուչ
կը պահեն դամբարանները. այդ ծառայողնե-
րու շուքին տակ, ծաղկազարդ ածուներով
չըլապատուած վանդակապատ չըլափակին մէջ,
կարծես աւելի խաղաղիկ քուն մը կը քաշեն

մեռեալները, մինչ ասդին՝ կիսափուլ պատէ
մը ներս, անկարգ, անխնամ, արեւին ու
փոշին տակ կուտակուած հողակոյտեր, ուր
լքում և ամայութիւն միայն կը պատկերանան:
Կը հաւատանք որ Մարմինան քանի մը տար-
ուան մէջ կրնայ փոխել իր հիմնական խըղ-
ճալի երեւոյթը, բաւական է որ ունեւոր ազ-
գայիններ պարտաճանաչ ըլլան և յարգող կա-
նոնադիրն, ինչպէս Հոգաբարձութիւնը իր
անձնուէր աշխատութեան առաջին քայլերուն
մէջ՝ յարգող եղաւ ժողովուրդին բաղձանքնե-
րուն ու բարեպաշտական դիւրադրածութիւն-
ներուն: Այսպէս նաեւ եկեղեցիի բարեզար-
գութեան մասին:

Ուրիշ անգամ ալ պիտի զբաղինք դըպ-
րոցի խնդրով:

ԱՅԺՄԷՈՒԹԻՒՆ

«Էջ-Մուշիր»ի դասը օրուան հետաքր-
քութիւն կը շարժէ Եգիպտոսի մէջ: Արաքե-
րէն քերթ մը որ հայու մը անունով կը հը-
րասարակուի եւ դասի կը կանչուի՝ Դեռ-
մանիոյ կայսեր անձին դէմ գրած ըրաւու
ստիպանքներէն ի պաշտպանութիւն Յոյ-
նեան: Ինչպէս կը տեսնեմք, շահեկանու-
թիւն ընծայող մէկէ աւելի տարբեր կէտեր
կան գործին մէջ:

Հետաքրքրեցանք տեսնել Պ. Սարգիսը,
քերթին տեսնել-խմբագիրը: Այրիկեան ա-
րեւելե խանութաւ պղնձագոյն դէմքով, ու անգ-
լիական կրթութիւն առած վառվորուն անձ
մը գտանք մեր դէմ: Իսկ հայութեան կը պա-
հէ միայն անունը եւ . . . հայաստ գգա-
ցումներ, ինչ որ աւելի կ'արժէ քան երեւոյթ
նկերի լեզուն պահած ըրաւ օտար գգացում-
ներով: Ինքը կը խոստովանի արդէն քէ սու-
րիական ծագում ունի:

«Էջ-Մուշիր»ը շարաքարքեր է, շա՛ս ա-
զասական ու արմատական գաղափարներ
արտայայտող, քաղաքական ծաղրանկարներով
համեմատուած. պզտիկ Intransigent մը, որչափ
որ կը ներքին երկրին օրէնքները ու արտ-
նախորդ տեղական հպատակութիւնը: Այս
հիմնգերող անգամն է որ դասի կը կոչուի.
առաջին յորս անգամը՝ հայկական խնդրոյն
ի նպաստ քուն կերպով գրած ըրաւուն
համար, իսկ այս անգամ՝ Երազայի գաւ-
կընտրուն սիրուն:

Դասի առիթ տուող արարքն է «Տեղի Գրոհիչ»-ի մեկ յօդուածին արտաստումը՝ Վիլհելմ Կայսեր դէմ, ինչպէս նաեւ Ռօշ-Վորի քանի մը համալսարան յօդուածներուն քարգնանքները։ Եզիպոսի գերմանական դիւանագիտական գործակալսար Պ. Ֆոն Մէ-դերնիսի այս հրատարակութիւններուն դէմ բողոքած է Արսաֆիլ գործող նախարարութեան, որ ընդհ. դատարանին յանձնած է խնդիրը։

Պ. Մարգիս այն օրագրողներու դասակարգին կը պատկանի որոնք հաշտականի առջեւ ընկերակցելու գիտէր. պայքարը աւելի կ'ոգտորէ գիտելիք, քառական է որ գրչի պայքար մնայ, քեւել իր դէմ աւելի եղած է, իբր մեկ տարի առաջ պատկերասէր վաս փորձ մը կատարուելով իր անձին վրայ, — քարտ-քաղաքաւոր տեսչոյ։ Այս դէպք պատճառ մը չէ եղած որ գրչի ձգէ. ու կը շարունակէ իր խնդիրները, իր գաղափարներուն մէջ հաստատուելու մէջ մը հաստատուելու մէջ։ Համեմատելով մը ունի Շարա Քոչ-Պէյի փոխարին մը փոխարին մէկուն մէջ, ուր կ'աշխատէր քանի մը գրաւոր մը եւ պոստի քանակաւ մը՝ Ապպախիյէի ծառայողներուն տակ, ուր կը քանակի ծերունի մօրք հետ։ Հազիւ քանակաւ տակ կայ, գոյց աւելի պակաս. իր լայն ճակատը, ակնոցներուն տակէն փայլող կրակ ու բոց սեւ աչքերը եւ անզոյիւրէն արագ ու մաքուր խօսակցութիւնը՝ որ հազիւ կը հասնի գաղափարներուն ետեւէն, առաջին երեւոյթով ցոյց կուտան քեւ տաքանդաւոր երեստար մըն է։

Երբ հարցախոնարհեցիք զինքն իր առաջին յոռ դատարան վրայ, Պ. Մարգիս աւելցուց իր շեշտով մը.

— Կը հաւատարմեմ որ այդ միջոցին Եզիպոսի մէջ չի գտնուեցաւ հայ մը որ զար ձեռքս տեղեւոր, քանի մը խօսակցութիւն հաւանական յայտնուելու համար։

Այս գանգաւոր չի զարնացուց զմեզ։

ԴԵՊ Ի ՊՈԼԻՍ

«Մարգիսին իր գաւառին մէջ պատիւ չունի» աւետարանական ճշմարտութեան դէմ յանդիման կը կենայ ուրիշ ոչ նուազ նշանակիչ ճշմարտութիւն մը, մօնկոլեան մօրի ծնունդը — «Ամէն ազգազ իր աղբանոցին մէջ կը խօսի» — Եւ այս վերջինը կարծես մասնաւորապէս կը յարմարի մեր գաղթականներուն։ Անցեալ տարուան տխուր դէպքերէն յետոյ, որոնք տնտեսապէս այնքան կործանարար եղան Վ. Պօլսոյ թէ՛ տեղացիք եւ թէ՛ գաւառացի հայրերէն, Եզիպոս, Պոլսոյ տարած, Գլուստուն եւ Կիպրոս սկսան գաղթել հազարներով հայեր, մեծագոյն մասամբ զուրկ օտար երկրներու մէջ յաջողելու ամեն հանգամանքներէ։

Թէեւ երոստայի ճամբորդներ եւ բանասէրներ մեզի թուրքոյ մէջ եւ միջմետական տարրին հետ բաղդատմամբ շատ ընդունակ Ազգ մը նկատած են, բայց ինքզինքնին չի խաբելու համար օտարներէն աւելի անաշուտութեամբ տեսնելու ու քննադատելու ենք մեր պակասութիւնները. այդ կերպով միայն կրնանք յառաջդիմութեան ճամբուն մէջ մտնել եւ հետզհետէ աւելի ընդունակ դառնալ մարտնչու կեանքի դժուարին պայքարին դէմ։

Մասնաւորելով մեր խօսքը Պօլսոյ եւ գաւառացի այն հայերուն վրայ որոնք անցեալ տարուան վերջերը Եզիպոս գաղթեցին, յաւելով պիտի ըսենք որ անոնք երես ձերմկնող ժողովուրդ մը

չի հանդիսացան այս երկրին մէջ ու չը կրցին յաջողապէս մրցիլ ո՛չ միայն երօտական ու տարական գաղթիւն, այլեւ ո՛չ իսկ ընդիմադրին հետ։

Սկսելով մեր Պօլսոյ գաղթէն ետեւ երկու տարիներէն որոնք թուրքոյ մայրաքաղաքին մէջ ուսումնականի տիրոջով կը փրանան եւ սակայն այստեղ Եզիպոսի փորձարարին վրայ իրենց հըմտութեան աստիճանը հաշիւ անհաշիւելի հետք մը թողոյց, մինչեւ մեր աշխատող յետին գոտակար, զը, համարաւոր իր երեքմիկ տոկոսութեամբ, պարբարութեամբ եւ պարկեշտութեամբ, ապրիլ-րոթեան, ծառայութեան ու զանազանութեան նշանները ցոյց տուին Փարաւոններու երկրին մէջ։ Ասիկայ ապաւոյց մըն է որ մեր արժանիքը լոկ յարաբերական նշանակութիւն ունի, այսինքն թէ մեր բուն մը կարծենք թուրքոյ մէջ եւ մասնաւորապէս թուրքերուն հետ բաղդատմամբ։ Իսկ թուրքացիներ, բացառիկ անհատականութիւնները յարգելով մեր արժանիքը զգալապէս կը պարկեշտէ։ Մինչեւ թուրք արժանիքը անոր մէջ կը կայանայ որ մարդ ուր որ ալ գտնուի, ինչ պայմաններու տակ ալ սարկի՝ անպատճառ յաջողելու է, անպատճառ մրցիլ զիտնալու է զինքը շրջագոյն տարրին հետ։

Մեր այս գիտողութիւններուն շատ մը տարակրթիւններ ընդունելով պիտի գտնուին, գիտենք, ամենուն ալ պատասխանները պատրաստ ունինք, բայց Փարսի էջերը չեն ներքեր որ քննութեան նիւթ ընենք, մէկ յօդուածի մէջ, այդ ամենէն։ Թերեւս յառաջիկային դատ դատ կուտանալու ենք անոնցմէ իւրաքանչիւրը։ Առ այժմ ընդհանուր կերպով մը ուսումնական ընդունելու թուրքութիւնը ամէն ինչ «ուրիշ» սպասելիքն է։

Այսպէս է նաեւ մեր անհատական կեանքին մէջ, տեսակ մը ծառայութիւն, ապրիլ-րոթեան ու նիւթ, մեր ձեռքով մեր գործը տեսնել չենք գիտեր, ամեն բան ուրիշէն կ'սկսեցանք։ Ազգայնագրոյ մէջ անգամ մը գաղթականներէն մէկը Առաջնորդութեան եկաւ Գանձաժողովին ներկայանալու. կա՛ծեցինք որ կարեւոր խնդիրք մը ունի, խեղճ մարդ տուն մը պիտի փարձէ եղեր, ինքն իր գլխուն չէ կրցեր մէջէն ելլել եւ Գանձաժողովի անդամները տունի քիլլա կարծելով, եկեր է խնդրել որ իրեն համար տուն մը վարձեն...։ Այս պարագային օրինակ ցոյց կուտայ թէ ո՛ր տնտեսական ձեռնարկներուն ոգին կը պա՛սի մեր մէջ ու հասարակ Վ. ասիկա մեր անյաջողութեան գլխաւոր պատճառներէն մին է թուրքացիներէն դուրս, զարգացած երկրներու մէջ։

Ասոր համար է որ մենք, իբրեւ ժողովուրդ, ամենէն աւելի թուրքոյ մէջ կրնանք յաջողիլ, այն գերազանցապէս ծով երկրին մէջ ուր մենք աշխատանքի տեղ կ'անցնինք, այն գերազանցապէս տըխմար ժողովուրդին մէջ որու քով մենք մէյմէկ «օխտն իմաստուն» կը դառնանք։

Եզիպոսի գաղթականները այս օտար հողին վրայ, ուր տեղ իրենց կարողութեան ընդերքը եւ իբրեւ ժողովուրդ հաւաքարար յաջողիլ, շատ տառապանք, շատ թշուառութիւն կրցին։ Հակառակ եղած զգաղութիւններուն ու օգնութիւններուն, իրենց արդի վիճակը չափէ դուրս աննախանձելի է։ Չէ՛, այս երկիրը մեր գաղթականներուն չի յարմարի. պէտք է Պօլսի վերադառնալ։ Թուրքոյ մայրաքաղաքին մէջ որքան ալ գործերը գէշ երթան, մարդ դարձեալ անօթի չի մնար, մեր ամենէն խելացի թէեւ այստեղ Փէլլուհի լակտի մը չափ հնարազէտ չէ, բայց հոն Պօլս, մեր յետին տխմարը խելացի թուրքէ մը աւելի կը շահի։ Եւ յետոյ, հոն վերջապէս հոն հայութիւն մը ունինք որու ձեռքին մէջ կեդրոնացած են երկրին գրեթէ ամբողջ առեւտուրն ու արհեստները. մէկ խօսքով «Ամէն ազգազ իր աղբանոցին մէջ կը խօսի», նախապատուութիւն հայերը։ Անըմբռնելի ծառայութիւն մըն է այստեղ մնալով ամեն օր իր պարէնը նախապատուութիւն Գանձաժողովներէն սպասել՝ փոխանակ իր ծնած, սնած ու վաստակած երկիրը վերադառնալու եւ հոն գէշ աղէկ գործով մը զբաղելու։

Կոտորածի երկիւղը։ Մարդկօրէն ու արամբանօրէն խորհելով, երբ մեր յեղափոխական կուսակցութիւնները Պօլսոյ մէջ նոր ցոյցեր չի կազմակերպեն՝ ջարդ կամ հալածանք տեղի չունենար Պօլսոյ մէջ։ Եւ նոյնքան տրամաբանական է մտաձեւ որ Եզիպոսիական մարմինները անցեալին տը-

խուր փորձառութեանն օգտուելով, չի պիտի ուզեն անոնց կրկնութիւն տեղի տալ։ Եթէ անոնցմէ դուրս անանկաւոր պատահին, ա. ուր ալ force majeure-ներ են եւ խելացութիւն չէ հաղորդեալ հաւատարմութիւններու համար ինքզինքը տնտեսապէս ու քաղաքապէս քայքայել։ Անանկաւորները միայն մէկ երկրի յատուկ չեն, թէեւ անուրանալի է որ թուրքոյ մէջ ամենէն աւելի կը պատահին։ Ինչ որ ալ ըլլայ սակայն, երբ կ'ընդունին մէկ նախորդ Պօլսի վերադառնալու առաւելութիւնները, իսկ միայն մէջ անպատճառութիւնները զենք, առաջինները աւելի ծանր պիտի կշռեն։

Ուրեմն դէ՛ս ի Պօլս։

Ա. Ե. Ս. Մ.

Լ. Մ.

Ա. Զ. Գ. Ա. Յ. Ի. Ն. Լ. Ո. Ի. Բ. Ե. Ը.

Ազգայնագրոյ մէջ կը հաղորդեն թէ Պօլս փաշա Նուպար մեկնելէ առաջ իր պաշտպանութեան ներքեւ առեր է տեղացի ազգ. վարժարանէն տասն եւ հինգ աշակերտ որոնց կը թուրքեան ծախքը ինք պիտի հոգայ։

Ընթերցողաց ընկերութեան գործադիր ժողովը, ինչպէս արդէն ծանուցինք, ընտանեկան երեկոյթ «at home» մը կազմակերպած է որ տեղի պիտի ունենայ յառաջիկայ շաբաթ գիշեր, 3 յունիս, ընթերցատան սրահին մէջ։

Այդ առաջին երեկոյթին պիտի հրաւիրուին ընկերութեան անդամները իրենց ընտանիքներով։

Տիկին Վիրթինի Նուարդ եւ Պ. Գ. Թրեանց իրենց սիրայօժար աշակցութիւնը պիտի նուիրեն այս սիրուն հանդէսին։

Պատիկ անգաղստապահութիւն մը մեզ կը ներէ ըսել թէ Տիկին Նուարդ իր ճոխ ռեքերթիւններէ երեք հատուածներ ընտրած է այդ գիշեր երեկոյ շաբաթ. ասոնք են՝ Պապայի՝ Սերէնասը, Փօրցաի՝ Տէքսիլիօի մեքսիկա եւ Բրոմէի ֆալսիթը։

Իսկ Թրեանց եւ ամեն ծիծաղաշարժ երգը պիտի երգէ իր սովորական խնդանութեամբ։ Օր. Գլուրթիս գաշնակի վրայ պիտի ընկերակցի երգողներուն։

Ձով սրահ, ընտիր բաղնիք, գեղեցիկ ձայն, խնդալու եւ խօսելու առիթներ, գաշնակ եւ ընտանեկան զովարարչի ըմպելիներ, այս ամենը հաճելի ժամանակ մը կրնան ընծայել հրաւիրեալներուն որոնք անշուշտ շնորհակալ պիտի ըլլան իրանց գործադիր ժողովին եւ թերեւս պիտի հարցնեն երկրորդ երեկոյթին թուականը։

ՏԵՂԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ

Բարձր. Խալիլը Լիվայութեան աստիճանի բարձրացուց խալիվական Մահմուտա զրօսանալին հրամանատարը՝ Ալի պէյ Էտապէ։

— Բարիդէն Հավասի հեռագիր մը կը ծանուցանէ թէ Տիգրան փաշա մայիս 30ին Լիվայօնէն մեկնելու է Լոնտոն երթալ միանալու համար այն պատուիրակութեան որ եգիպտական կառավարութիւնը պիտի ներկայացունէ թագուհւոյն գահակալութեան վաթսուներեք յոբելեանի հանդէսներուն։

— Եզիպոսիական բանակին սպարապետ Գիլինէր փաշա երկուշաբթի օրը վերադարձաւ Տոնկոլայէն։

— Ճարտարապետ Մարտիկի Պոլոյ թղթակցը
կը գրէ մայիս 14/26 թուականով, Թուրքի
Ջարդին քննիչ Յանձաժողովը վերադարձաւ,
քանի որ թուրք և լատինական հայեր ձերբա-
կալել տալէ ետք: Տէրութիւնները աւելի կա-
րեւոր հոգեր ունին այս պահուստ, այնպէս որ
օսմ: իշխանութիւնը ուղղաձիգ պէս կրնան
շարժիլ: Ոչ ոք միտքէն պիտի անցունէ անոնց
արարքը քննել ու տեղեկագիրներուն վրայ
վիճարանիլ: »

— Ճիտեմէն վերադարձող իսլամ ուխ-
տաւորներուն մէջ որոնք էլ-թօք մաքրանոցն
հասած են, կասկածելի մահ մը պատահած
ըլլալով, միջրոպագնական քննութիւն կա-
տարուած և հաստատուած է թէ մահուան
պատճառ եղող հիւանդութիւնը քոլերա չէ:
Ասով հանդերձ շոգենաւը քարանձախայի են-
թարկուեցաւ:

— Կերպ կերպ մեկնութիւններու առիթ
տուաւ Հալապի այն հեռագիրը, թէ եգիպ-
տական բանակին մէջ ծառայող անդիւնացի
սպաններն, որոնք արձակուրդով բացակայ կը
դառնան, հրաման ստացած են մինչեւ յու-
նիսի վերջ իրենց պաշտօնի գլուխը վերադառ-
նալ: Էմիրը Կադէթ կը յիշեցունէ թէ այդ
սպաններուն վաղուց արդէն ազդարարուած
էր թէ յուլիս 15ն անդին չեն կրնար
բացակայ մնալ, որմէ ետք՝ հաւանաբար՝ ե-
գիպտական բանակը յառաջխաղացութիւն մը
պիտի կատարէ գէպի Սպու Համէտ:

— Էյ Մուաշաֆի մէջ կը կարդանք թէ շա-
բաթ իրիկուն Գահրէթի ամրոցի դործարան-
ներուն մէջ հրդեհի սկզբնաւորութիւն մը պա-
տահեր է, բայց առաջը չուտով առնուեր է:

Սկզբնապատճառն յայտնի չէ:

— Թուրքիայէն արտաքսուած բազմաթիւ
հեղին հպատակներ վերջին օրերս Ալեքսան-
դրիա հասան: Մեծ մասով իզմիրէն ու Սե-
լանիէն կ'ուզան. կըսուի թէ Ռումանիա և
Պուլկարիա չեն ընդունիր յոյն գաղթականներ:

— Երկուշաբթի օրը Տամանհուրի մէջ
կախաղան հանուեցաւ Րաքալլահ-Սաատ-էլ
Արապի անուն անձը որ մահուան դատապար-
տուած էր սպանութեան համար:

— Արեւելեան երկաթուղիներուն Յունիս
1ի (երէկ) վիճակահանութեան առաջին պար-
գերը՝ 726,992 թիւը շահած է:

Հ Ե Ռ Ա Գ Ի Ր

Աւասիկ շաբաթ օրէն ի վեր հասած կա-
րեւորագոյն հեռագրաց ամփոփումը:

— Աթէնքէն Կ. Պոլսոյ օտար գեսպաննե-
րուն ուղղուած ծածկագիր հեռագրեր կիմա-
ցունէին թէ Յունաստանի արքայական ընտա-
նիքը պաշարուած է պալատին մէջ և թէ արքա-
յական զօրանաւը պատրաստ կը սպասէ ի Բիրէ,
առաջին առթիւ հեռացունելու համար Եօրկիոս
թագաւորն ու իրենները: Երկրորդ հեռագիր
մը հերքեց այս լուրը: Գահաժառանգ իշխա-
նը, Կալլեպի իշխանին ստիպմամբ հրաւիրուած
է Լոնտոն երթալ ներկայ գտնուիլ թագուհի-
ւոյն յորէլեանի հանդէսներուն: Այս կերպով
կազատի դժուարին կացութենէն որուն կրնայ
մատնուիլ Աթէնք հասնելուն՝ վախճալով ժո-
ղովրդական ջոյցէ մը,

— Հալապի և Ռիւթէրի հեռագրեր յաջոր-
դաբար կը ծանուցանեն թէ օսմ: անկանոն
զօրքեր Բանտիայի մօտ գիւղի մը մէջ տասնը-
հինգ յոյն շարդած են: Կրէտէի յոյները կը
բողոքեն անդիւնական նաւատորմին հրամանա-
տարին դէմ, անոր կողմնակցութեան համար
ի նպաստ թուրքերուն:

— Սուլթանը բացորոշապէս հաւանած է
13օրեայ զինագաղարի մը, մայիս 8/20էն
հաշուելով: Եթէ հաշտութեան պայմանները
չորոշուին մինչեւ այն ատեն, զինագաղարի
պայմանագրամբ պիտի վերանորոգուի:

— Անհիմն է այն լուր թէ Պաթէնպէրկի
Պրանց Եօզէֆ իշխանը Կրէտէի կարաւարիչ
պիտի անուանուի:

— Էտհէմ փաշա Կ. Պոլիս կանչուեցաւ:

— Հռոմէ կը հեռագրեն թէ Ալեքսանդրիո
որ Ռեպէրթօ թագաւորին վրայ սպանութեան
փորձ մը ըլլած էր, մշտ՝ շենական շղթայակապ
աշխատութեան դատապարտուեր է:

* * *

Այս առտուան հեռագիրներ կը ծանու-
ցանեն թէ Անգլիոյ երեսփոխանական ժողովը
վերստին սկսեր է զբաղիլ կրէտական հարցով
որ օրուան խնդիր կը դառնայ: Պ. Պալֆուր
յայտարարեր է թէ Տէրութիւնը կը վիճարա-
նին օսմ: զօրքերուն Կրէտէի ելլելուն ինչպէս
նաեւ հարկ եղած թուով զինուորական զօ-
րութեան մը կազմութեան վրայ՝ բարեկար-
գութեան պահպանման համար: Հալապի այս
տեղեկութիւնները կը հաստատէ և կ'ամօղ-
ջացունէ Ռիւթէր. խորհրդարանի կուռակցա-
պետներուն մեծագոյն մասը տրամադիր կ'ե-
րեւին Կրէտէի ինքնօրինութիւնն ընդունելու,
բաւական է որ օսմ: զօրքերն հեռացուին:

ԿԵԱՆՔԻ ԴԱՌՆՈՒԹԻՒՆՆԵՐ

Ուղածիդ չափ լուստեա եղիր, եթէ կրնաս,
կեանքը՝ վարդապետ օրերու շարք մը նկատէ, եթէ
կուզես, ապրիլը՝ մեռնելէ լուսաւոյն համարէ, եթէ
կը համարձակես, նորէն կեանքը չի դադիր ամենէն
տեղը ամենէն գոգելի, ամենէն դառն բանը ըլլալէ:

— Եթէ աշխարհիս վրայ անուշեղէնը չըլլար —
կըսէր ինծի բարեկամ մը — ապրիլը՝ կուտ մը չէր
արժէր:

Ասոր պէս շատեր գիտեմ որ կեանքը՝ թարմ
ձեռնոցներ հագնելու, նորիկէ ծխելու, կեսուր մը
կառնելու, էրկիկին խորելու, թաղական ըլլալու
հաճոյքին համար միայն տանելի կը գտնեն և կը
բացազանչեն թէ « կեանքէն անուշ բան չ'կայ »:

Երանի՜ իրենց:

Բայց անգին գնա՜ հարցուր թէ կեանքը ինչպէս
կը գտնեն:

Տունը մնացած աղջկի մը ի տես հինգ զաւակ
ունեցող կնիկն մը:

Երկու տարը կտրած մէկը՝ « Երկու թիւի » մը
և երկու թիւերէ՝ դուրսը՝ զոյգ մը « Բո տը Սիւլտ »
ձեռնոցի առջեւ:

Երկու օրէ ի վեր բան մը չուտող մէկը՝ Կէրիթ
Բալէսի խոհանոցին պատուհանէն ներս նայած պահուն:

« Փարոս » ի խմբագիրներուն սեղանին վրայ
« Փայմը » մը գիր և հարցուր թէ կեանքը ինչպէս
կը գտնեն:

Սարկաւաղի մը՝ ծայրագոյն վարդապետի մը
քով կեցած ատեն:

Ճաղատի մը՝ մազերը կտրել տուող երիտասար-
դի մը հանգէտ:

Վարժապետի մը որ քննութիւն անցունելու
վրայ է, մանաւանդ մրցման քննութիւն մը:

Անդամալոյծի մը՝ զոյգ մը վաղձօրներու ի տես
Եւ վերջապէս գնա՜ հարցուր թէ կեանքը ինչպէս
կը գտնէ ամուսնացեալ մը . . . մեղրալուսինէն ամիս
մը ետքը:

Վերջը նորէն կը տեսնուինք:

ՌԱՏԱՄԵՐ

ԱՐՁԱԳԱՆԳ

ԿԱՆԱՆՑ ՄԱՍԸ

Պատերազմի, զինագաղարի և ամեն զիւանա-
գիտական խեղկատակութեանց վրայ որքան որ բան
գրուի, մեր ընթերցողները թէն պիտի պահեն
մենէ, գիտենք, նորաձեւութեանց վրայ ալ բան մը
ըսած չըլլալու համար:

Գանգատը օրինաւոր կը համարինք և իրենց
վաճառքը լրացնել հաճելի պարտականութիւն մը:

Այս տարի՝ ամառուան եղանակին համար զոր-
ծածուած կերպաներուն գոյնը՝ անցեալ տարուա-
նէն տարբեր է: Անցեալ տարի շատ զօրաւոր, շատ
աչրի գոյնակի գոյներ կը վաճառէին, օրինակի
համար կաս-կարմիր, զօրաւոր կապույտ, բիրտ մա-
նիշակաշոյն, ևն. մինչդեռ այժմ գոյները նուազկոտ
բան մը ունին իրենց մէջ, հիւանդագին բան մը, եթէ
երբէր կարելի է այսպէս ըսել. Բարիգունները՝ նո-
րաձեւութեանց այդ շատուածութիւնները, մեղմ կար-
միր, անուշ կապույտ, բայց պէժ, և ատենց պէս գոյ-
ներ կը հագնին կոր:

Մեծ ծաղիկի տէրերն են որ կը սիրեն սպա-
նիական տրոպիկալ ու սեւ ձերմակին հետ խառ-
նելու մէջ կը կարծնայ:

Սեւին և ձերմակին ներդաշնակութիւնը՝ յաւի-
տեանական մօտան պիտի ըլլայ:

Գաղով գլխարկի համար գործածուած յարդին՝
մոխրագոյնը, արծաթագոյնը, երկնագոյնը ընդուն-
ուածներն են, առանց մոռնալու սեւը որուն չուրին
տակ էն տգեղ դէմքերը բան մը կը վատկին:

Այսքանը գոյներուն հաւելի, ձեւերը յառաջի-
կային:

* * *

ՅՈՒՆԵՍԿՈՒՆԵՐՈՒ ՊԵՐՃԱՆՍՈՒԹԻՒՆԸ

Անգլիոյ թագուհւոյն գահալուծութեան 60րդ-
տարեդարձին առթիւ տրուելիք հանդէսներուն մէջ
նշանակելի է այն նուագահանդէսը ուր Ատէլինա
Բաթթի պիտի երգէ և Բատթի վերջի դաշնակ պի-
տի զարնէ. այս երկուքը զատ զատ բաւել և հինգ
հազարական ֆրանք պիտի տանեն մէկ գիշերուան
համար:

Պէնսիլանի խումբին վերջին ներկայացման զուտ
հասցիքը 120 զրուէ եղած է . . . տան և երկու հո-
գի մը վրայ բաժանելի. այս հաշուով հայ դերասան մը
Բաթթիին մէկ գիշերուան վատըր՝ ձեռք բե-
րելու համար, երեսուն տարի շարունակ ամեն գիշեր
ներկայացման մը մէջ գտնուելու է:

Բարեբաղդաբար մեր դերասանները յուսահա-
տիլ չեն գիտեր:

Այս ալ առարկնութիւն մըն է:

Ծ Ի Ծ Ա Ղ

Հայր մը իր տղուն՝

— Այս շաբաթ դասարանիդ մէջ քանի՞ երող
հանդիսացար:

— Տասը երող երող:

— Քանի՞ առակեր էի:

— Տասը երող:

— Բաւ՞ օր վերջը,

— Այս շաբաթ քանի՞ երող եղար:

— Տասը երող երող:

— Ամերիկ, մէկ աստիճան վաւեր ես:

— 2է՛, հայրիկ, մէկ առակեր մը դպրոցէն կ'աւ-
ել խեղճ մարդը ամբողջ յոյսը այդ տղուն վրայ
դրած է:

* * *

Ամուսնական երջանկութեան վրայ կը խօսիմք
անցեալ գիշեր:

— Ուր քանի է որ ամուսնին գիշեր մը դուրս
եղած չի, քսաւ սիկին Բ.:

Ուրիշ սիկին մը ամուսնոյն դառնալով՝

— Տեսա՞ր, շնորհով երկը ինչպէս կըլլայ,
ըսելուն չի մնաց:

— Սոսկալի յոյսացաւ ունենալուն համար, ա-
ւելցուց սիկին Բ.:

ՏՕՔԹՕՐ ԼՕՆԿ

ՏՐ. ԼՕՆԿ, մասնագէտ կանանց, ստամոքսի, մու-
րի և ջրային հիւանդութեանց: Կ'ընդունի իրեն
դիմող հիւանդները Բանիօն Ֆինք, Հօթել Քօնքինգ-
թալի դէմ, ամեն օր առաւօտեան ժամը 10էն 11 եւ
կեսօրէն վերջ 2էն 4: Բոլոր վկայեալ աղօթք ձի կը
դաւմանուին:

Le Gérant: HENRY SAKAKINI

Յ. ԵՒ Կ. ՄԱԹՈՍԵԱՆ ԵՒ ԸՆԿ.

ԳԱՀԻՐԷ ԵՒ ԱՂԵՔՍԱՆԴՐԻՍ

ԵԳԻՊՏՈՍԻ ՄԷՋ ԾԽԱԽՈՏԻ ԵՒ ՍԻԿԱՌԷԹԻ
ՍԵԾԱԳՈՅՆ ԳՈՐԾԱՐԱՆ

ԸՆԳԻՏՈՒՄ ՄԵՐԵՐՈՆԵՐ «ՇԱՐԱ ԱԳԱՍ»
ԽԱՈՆ ԴԱՏԱՐԱՆՆԵՐՈՒ ՂԵՄ:

ԸՆԹԱՑԻԿ ԳԻՆ ՍԻԿԱՌԷԹՆԵՐՈՒ

ՍԻԿԱՐԷԹ ՌԵԼԱԵԱԼ 1000 ՀՈՒՐ 2 1/2 ԱՆԳ. ՈՍԿԻ

"	ԽՐՈԹԻՔԵԱԼ	"	"	2	"	"
"	ՊԱՂԱՏԱԿԱՆ	"	"	1 1/2	"	"
"	ՊՕՏՏԱ	"	"	1 1/4	"	"
"	ՆԱԹԻՐԷԼ	"	"	1	"	"
"	ՁՈՒ	"	"	20	ՓՐԱՆԻՐ	"

ԱՌՈՂՋՈՒԹԻՒՆ, ՈՅԺ, ԿՈՐՈՎ

ԴԱՐՄԱՆ ԱՆԱՐԻՒՆՈՒԹԵԱՆ, ՏԿԱՐՈՒԹԵԱՆ,
ԵՒ ՋՂԱՅԻՆ ՇԻՒԱՆԴՈՒԹԵԱՆՑ

ԼԸ ՊԻՕԺԵՆ

ՄԻԱԿ ԱՆՈՒՆԳ ՈՐԱՐՈՅԺ ՆԻԼԱՆՈՒՆԵՐՈՒ ԽԱՐԱՐ,
ԿԱԳՈՐԻՅ ԱՐՏԻ, ԸՆԴԱՌԱԿԱՆ ԳՈՐԾԱՐԱՆՆԵՐՈՒ, ԱՐ.
ԵԱՆ ԵՒ ՉՂԱՅԻՆ ՆԻԼԱՆՈՒՆԵՐՈՒ ԳՈՐԾԱՐԱՆՆԵՐՈՒ:

ԿԸ ԵԱՆՈՒՆԱՐԱՐՈՒ ԲԵԾԵԿԱՆԻ ԳՈՐԾԱՐԱՆՆԵՐՈՒ:
ՍԲԱՆՅԵԼԻ ՂԵՂ ՈՅԺԻ ԿԵՏԻ ՈՒՆԵՂՈՒՆԵՐՈՒ ԽԱՐԱՐ:

ԿԸ ԳՏՆՈՒԻ ԱՄԵՆ ԴԵՂԱՐԱՆՆԵՐՈՒ ՄԷՋ

ՄԵՐԵՐՈՆԵՐ. — Ա. ՄԱՆՏՈՅԻՍԻ ԱՆԿԻՐՈ—
ԵԳԻՊՏԱԿԱՆ ՂԵՂԱՐԱՆԻ ԷԳՅԵԲԻԵ, ԴԱՆԻՐԷ:

ՀԱՄՄԱՄ

ԵՐՐՈՊԱԿԱՆ ԵՒ ԱՐԵՒԵԼԵԱՆ ԲԱՂՆԻՔ

ՀԱԼԻՄ ՓԱՇԱՅԻ ՀՐԱՊԱՐԱԿ, ՍԲԼԱՆՏԻՑ ՊԱՌԻ ԵՏԻՆ

ԲԱՂՆԻՔ, ՋՐԱԲՈՒԺՈՒԹԻՒՆ,
ԵԼԵԿՏՐԱԲՈՒԺՈՒԹԻՒՆ

ԲԱՂՆԻՔԸ ԲԱՑ Է

ԵՐԻՅ ԺԱՐԳՈՅ ՀԱՐԱՐ ԱՌԱՌՈՒՄԻ ԺԱՐԸ 75 10
Ե ԵՐԻՅՈՒՆԸ, ԿԵՍ ՕՐԷՆ ՍԿԵԱԼ ՍԻՆՅԵԼ 8:
ԿԱՆԱՆԵՂ ՀԱՐԱՐ ԱՌԱՌՈՒՄԻ ԺԱՐԸ 105 10 ՍԻՆՅԵԼ
ԿԵՍ ՕՐ:

ՈՐՐԱՐ ԵՒ ԿԻՐԱԿԻ ՕՐԵՐԸ ՍԻՆՅԱՆ ԵՐԻՅ ԺԱՐԳՈՅ ԽԱՐԱՐ
ԿԻՐԱԿԻ ԵՒ ՈՒՆ ՕՐԵՐԸ ՀԱՄՄԱՄ ԿԵՍ ՕՐԷՆ ՎԵՐՋ
ԳՈՅ Է:

ՀՐԱՆՑ ԱՋԱՏԵԱՆ

ԱՐԴԿՈՂ ԵՒ ԼՈՒԱՑԱՐԱՐ

ՀԱՅ ԵԿԵՂԵՑՈՅ ԳԷՄ ԵԱՅԱԾ ԽԱՆՈՒԹԻՒՆ
ՄԷՋ ԱՄԵՆԷՆ ԴԺՈՒՐԱՐԱՆԱՆՆԵՐԸ ԳՈՐԾԱՐԱՆՆԵՐՈՒ
ԵՂԱՆԱԿԱԼ ԿՐԱՐԴՈՒԿԷ ՀԱՅԻԿՆԵՐ ԵԱՅԻՆ ՍՈ—
ՎՈՐԱԿԱՆ ԳԻՆԵՐՈՎ:

ՈՒՂՈՂՆԵՐՈՒ ՀԱՐԱՐ ԵՐԱՅԱՐԱՐՈՒԹԵԱՆ
ՃԻՂ ՄՐՂ ԱՆԵՂՈՒԾ Է, ՈՐ՝ ԵԱՆԱԽՈՐԴ—
ՆԵՐՈՒՆ ԵՐՈՒՆԱԿԵՂԵՆՆԵՐԸ ՂԱՄ ՂԱՄ ԵՐԱՅԻՐ
ԳՆԱՀԱՏՈՒԹԻ ԴՐՈՒԹԻՒՆԸ ՀԱՍՏԱՏՈՒԾ Է:

Ի ԴԻՐՈՒԹԻՒՆ ԵԱՆԱԽՈՐԴԱՅ ԵՐՈՒՆԱԿԵ—
ԴԵՆՆԵՐԸ ԻՆՔ ԱՆՃԱՄԲ ԿԻՐԱԿԻ ԱՌՆԷ ՍՈՒՆԵՐԸ
Ե ԿԻՐԱԿԻ ՎԵՐԱԳԱՐՃՆԷ:

Տ Պ Ա Ր Ա Ն
ՓԱՐՈՍ ԼՐԱԳՐԻ

ԿԸ ՏՊԱԳՐՈՒԻՆ

ԱՄԵՆ ԼԵՋՈՒԵ ԾՐՋԱԲԵՐԱԿԱՆ
ՄԱՀԱՋԴ, ՀՐԱԻՐԱԳԻՐ, ԱՅՑԱՔԱՐՑ

ՑԱՆԿԵՐ, ՏԵՂԵԿԱԳՐԵՐ

ՀԱՇՈՒՅՈՒՑԱԿ, ՆԱՄԱԿԱԳԼՈՒԽ

Տ Ո Մ Ս Ե Ր

ԵԳԻՊՏՈՍԻ ՕՐ Ե Է. ԲԱՂԱՔԷ ԿԱՄ ԳԻՂԷ ԵԿԱԾ ԵԱՆՃԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԱՄԵՆԱՅՆ ԽԱՌ—
ՄՅԸ Ե ՎՈՒԹՈՎ ԿԸ ԿԱՌԱՐՈՒՆ:

ՎԱՅՐԿԵՆԱԿԱՆ ՏՊԱԳՐՈՒՄԻՆ ԱՅԵԲԱՐՏԵՐՈՒ ԵՒ ՏՈՒՆԵՐՈՒ

ՏՊԱՐԱՆԸ ԲԱՅ Ե ԱՄԵՆ ՕՐ ԲԱՅԻ ԿԻՐԱԿԻ ԵՒ ՏՈՒ ՕՐԵԿ ԱՌԱՌՈՒՄԻ ԺԱՐԸ 75 10 ՍԻՆՅԵԼ ԵՐԵԿՈՅԱՆ 7:

ԵԳԻՊՏԱԿԱՆ ԵՐԿԱԹՈՒՂԻՔ

ԺԱՄԱՆԱԿԱՆ ԵՐԹԵԻԵԿՈՒԹԵԱՆՑ

ՍԿԵԱԼ 1 ՓԵՐՈՒՐ 1897

ԳԱՀԻՐԷՆ ԱՂԵՔՍԱՆԴՐԻՍ ԳԻԺ

Կ Ա Յ Ա Ր Ա Ն Ք		ԽԱՌՆ	ՕՐՆԻԿ	ԿԵՍ ՕՐ	ՕՐՆԻԿ	ԷՐԱՐԷՍ	ՕՐՆԻԿ	ԷՐԱՐԷՍ	ՕՐՆԻԿԱՆ	
		1,2,3,4,5	1,2,3,4,5	1,2,3,4,5	1,2,3,4,5	1, 2, 4, 5	1,2,3,4,5	1, 2, 4, 5	1 2 3	ԿԱՐԳ
ԳԱՀԻՐԷ	ՍԵԿ.	4 45	—	7 —	8 15	9 30	3 30	4 45	7 15	11 —
ՊԷՆՀԱ	»	8 —	—	7 49	9 32	10 15	4 47	5 29	8 32	12 35
ԹԱՆԹԱ	ԺԱՄ.	11 28	—	8 30	10 30	10 55	5 45	6 7	9 30	1 44
	ՍԵԿ.	11 48	6 —	8 34	11 15	11 —	6 26	6 11	—	1 54
ՏԱՄԱՆՀՈՐ	»	3 10	7 34	9 41	12 49	11 58	7 59	7 7	—	3 51
ԱՂԵՔՍԱՆԴՐԻԱ	ԺԱՄ.	6 25	9 15	10 45	2 30	1 —	9 40	8 7	—	5 50

ԱՂԵՔՍԱՆԴՐԻՍԻ ԳԱՀԻՐԷ ԳԻԺ

Կ Ա Յ Ա Ր Ա Ն Ք		ՕՐՆԻԿ	ԿԵՍ ՕՐ	ՕՐՆԻԿ	ԷՐԱՐԷՍ	ԽԱՌՆ	ՕՐՆԻԿ	ԷՐԱՐԷՍ	ՕՐՆԻԿԱՆ	
		1,2,3,4,5	1,2,3,4,5	1,2,3,4,5	1 2 4 5	1,2,3,4,5	1,2,3,4,5	1 2 4 5	1 2 3	ԿԱՐԳ
ԱՂԵՔՍԱՆԴՐԻԱ	ՍԵԿ.	—	7 —	7 15	9 —	9 20	2 30	4 15	6 15	11 —
ՏԱՄԱՆՀՈՐ	»	—	8 6	8 58	10 2	12 14	4 13	5 15	8 6	1 9
ԹԱՆԹԱ	ԺԱՄ.	—	9 12	10 28	11 —	2 39	5 43	6 10	9 40	2 56
	ՍԵԿ.	6 15	9 16	11 20	11 5	2 49	6 30	6 14	—	3 6
ՊԷՆՀԱ	ՍԵԿ.	7 18	9 59	12 23	11 46	4 43	7 33	6 52	—	4 25
ԳԱՀԻՐԷ	ԺԱՄ.	8 30	10 45	1 35	12 30	6 25	8 45	7 35	—	5 50

ԳԱՀԻՐԷ-ՍԻԻԷՋ

ՊԷՆՀԱՅԻ ՋԱՄԲԱՑ

ՍԻԻԷՋ-ԳԱՀԻՐԷ

ԿԱՅԱՐԱՆՔ		ԱՌԱՌՈՑ	ԵՐԵԿՈՑ	ԿԱՅԱՐԱՆՔ		ԱՌԱՌՈՑ	ԵՐԵԿՈՑ
ԳԱՀԻՐԷ	ՍԵԿ.	11 40	7 —	ՍԻԷՋ (ԲԱՐԱԲ)	ՍԵԿ.	9 50	—
ՊԷՆՀԱ	ԺԱՄ.	12 28	7 48	» ԿԱՅԱՐԱՆ	»	—	3 30
	ՍԵԿ.	12 33	7 53	ԻՍԼԱԿԻԱ	»	1 20	7 5
ՋԱԿԱՐԻԿ	ԺԱՄ.	1 34	8 54	ՋԱԿԱՐԻԿ	ԺԱՄ.	3 7	8 53
	ՍԵԿ.	1 44	9 4		ՍԵԿ.	3 17	9 3
ԻՍԼԱԿԻԱ	ՍԵԿ.	3 40	1 —	ՊԷՆՀԱ	ԺԱՄ.	4 13	9 47
ՍԻԷՋ ԿԱՅԱՐԱՆ	ԺԱՄ.	—	5 —		ՍԵԿ.	4 17	9 4
ՏՅԸ (ԲԱՐԱԲ)	ԺԱՄ.	6 55	—	ԳԱՀԻՐԷ	ԺԱՄ.	5 5	10 35